

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՐԵՎԻԿ ԲԱՄԱԼՅԱՆ

Հայ լեզվաբանության մեջ կան նորաբանությունների տարբեր բնորոշումներ:

Եղ. Աղայանը նորաբանությունները բաժանում է երկու խմբի՝ *ընդհանրացող* (որոնք ժամանակի ընթացքում անցնում են գործուն բառապաշար և դադարում իբրև նորաբանություն գիտակցվելուց) և *մեկուսացած* (դիպլածային բառեր, հեղինակային նորակազմություններ, որոնք սովորաբար չեն անցնում գործուն բառապաշար)¹:

Ս. Էլոյանը ևս նորաբանությունների մեջ առանձնացնում է երկու խումբ՝ *լեզվական* և *խոսքային կամ անհատական*: Անհատական նորաբանությունների մեջ նա տարբերակում է ա) *պոտենցիալ բառեր*, բ) *դիպլածական բառեր*, գ) *հեղինակային բառեր*: Նա պոտենցիալ է համարում այն բառերը, որոնք կարող են կազմվել կամ կազմվել են լեզվի կենսունակ բառակազմական կաղապարներով և դեռևս չեն հասցրել ընդհանրանալ լեզվի մեջ: *Անհատական-ոճական նորաբանությունների* (օկազիոնալիզմ) մեջ Էլոյանը տարբերակում է երկու տիպի նորաբանություններ՝ *դիպլածային և հեղինակային*՝ նշելով, որ այս բաժանումը խիստ հարաբերական է. «Դիպլածային բառերն առանձնանում են հեղինակային բառերից իրենց գոյացման հապճեպությամբ, սարքովի բնույթով: Իսկ անհատական նորակազմությունները ստեղծվում են զուտ ստեղծագործական և գեղարվեստական նպատակադրմամբ»²:

Թ. Ղարազյուլյանը հեղինակային նորաբանությունները բաժանում է երկու խմբի՝ *դիպլածային և պոտենցիալ բառեր*, և դիպլածային բառերի մեջ առանձնացնում է ա) *ստեղծագործական կամ հեղինակային նորաբանություններ*, բ) *երգիծական բառեր և բառակապակցություններ*, գ) *գիտական դիպլածային բառեր և դ) խոսակցական դիպլածային բառեր*: Նա նշում է, որ պոտենցիալ և դիպլածային բառերի ըմբռնման հարցում միասնական կարծիք չկա³:

Նորաբանությունների ըմբռնման անմիօրինակություն է նկատվում նաև ռուս լեզվաբանության մեջ⁴:

¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Եղ. Աղայան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 331-332:

² Ս. Էլոյան, ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1988, էջ 182-207:

³ Տե՛ս «Լեզվի և ոճի հարցեր», գիրք 7, Եր., էջ 199-223:

⁴ Այս մասին տե՛ս, օրինակ, Բ. Томашевский. Стилистика. Л., 1983, Брагина А. Неологизмы в русском языке. М., 1973, Лопатин В. Рождение слова. Неологизмы и окказиональные образования. М., 1973, Земская Е. Современный русский язык (словообразование). М., 1973, «Современный русский литературный язык». М., 1988:

Հասկանալի պատճառներով այսպես կոչված լեզվական նորաբանությունների մեջ շատ են փոխառյալ բառերը, որոնց մի մասը ժամանակի ընթացքում փոխարինվում է հայերեն համարժեքով⁵: Հայերեն համարժեքները ստեղծվում են մի քանի հիմնական եղանակներով.

- բառապատճենում կամ կիսապատճենում` Internet – համացանց, экосистема – էկոհամակարգ,
- իմաստային պատճենում` диктофон – ձայնագրիչ, валюта – արտարժույթ// տարադրամ,
- գրադարձություն կամ տառադարձություն (հատկապես ազգային իրույթների թարգմանության ժամանակ)` պապայա, բառբաբ,
- իմաստային նորաբանություն` mouse – մկնիկ,
- նկարագրական թարգմանություն` հիպերտոնիա – արյան բարձր ճնշում:

Այս հոդվածում մենք կանդրադառնանք միայն հեղինակային-անհատական նորակազմություններին և դրանց թարգմանության դժվարություններին:

Յուրաքանչյուր լեզու ունի իրեն հատուկ բառակազմական կաղապարներ, օրինաչափություններ, և ամեն գրող նոր բառեր կազմելիս օգտվում է իր լեզվի հնարավորություններից: Ե՛վ հայերենում, և՛ ռուսերենում նոր բառեր ստեղծվում են երկու հիմնական եղանակով` բառաբարդմամբ և ածանցմամբ (հապավումներին այստեղ չենք անդրադառնա): Սակայն հեղինակային նորակազմությունների թարգմանությունը բավական բարդ խնդիր է, որովհետև շատ հաճախ երկու լեզուների բառակազմական հնարավորությունները, կաղապարներն ու օրինաչափությունները չեն համընկնում:

Նկատենք, որ հեղինակային նորակազմությունների թարգմանության խնդրին առանձնակի ուշադրություն չի դարձվել տեսական գրականության մեջ: Փոխառյալ լեզվական նորաբանությունների հայերեն համարժեքները, ինչպես արդեն նշել ենք, ստեղծվում են մի քանի եղանակով, սակայն այդ եղանակները միշտ չէ, որ կարելի է կիրառել, երբ խոսքը վերաբերում է հեղինակային-անհատական նորակազմությունների թարգմանությանը: Այս դեպքում կարևորը ոչ այնքան այս կամ այն բառի իմաստը թարգմանելն է, որքան հեղինակի լեզվաոճական առանձնահատկությունները, ինքնատիպ լեզվամտածողությունը թարգմանության մեջ պահպանելը:

Քննենք հեղինակային նորակազմությունների համարժեք թարգմանության հնարավորությունները ըստ Վլադիմիր Մայակովսկու և Սերգեյ Եսենինի մի քանի ստեղծագործությունների:

Վլ. Մայակովսկու նորակազմությունները միշտ անսովոր են, հետաքրքիր, անսպասելի, նա օգտագործում է ռուսերենի բառակազմա-

⁵ Այստեղ նպատակ չունենք մանրամասն անդրադառնալու այն խնդրին, որ երբեմն հայերեն համարժեքն այդպես էլ համագործածական չի դառնում և ի վերջո դուրս է մղվում լեզվից: Պատճառները մի քանիսն են` 1. հայերեն համարժեքը չափազանց երկար է, 2. անբարեհունչ է, 3. երբեմն անհեթեթ է կամ զավեշտական, 4. փոխառյալ բառն այնքան տարածված է, որ հայերեն համարժեքն այդպես էլ չի ընդունվում:

կան բոլոր հնարավորությունները, երբեմն նոր բառեր ստեղծում անգամ ռուսերենին ոչ հատուկ կամ գոյություն չունեցող կաղապարներով⁶:

Հոդվածում քննության ենթ առել Մայակովսկու «Облако в штанах» պոեմը, որը հայերեն է թարգմանել Պարույր Սևակը⁷: Մ. Լ. Գասպարովի հաշվարկներով՝ միայն այս մի պոեմում 63 հեղինակային նորակազմություն կա՝ 18 գոյական, 17 ածական և 28 բայ / դերբայ⁸:

Պոեմում բավականին շատ են նվազական-արհամարհական ածանցներով նորակազմությունները. սրանց միջոցով Մայակովսկին իր վերաբերմունքն է արտահայտում էժանազին սիրո, անհավատարիմ կանանց, ճղճիմ մարդկանց, կործանվող հասարակության ևն հանդեպ:

Должен быть маленький, смиренный **любочек**.

Սևակը նույն կաղապարով՝ գոյ.+փոքրացուց. ածանց, նոր բառ է ստեղծում.

Փոքրիկ կլինի, համեստ մի **սերիկ**:

Կամ՝

Из трещины губ

Обугленный **поцелуишко** броситься вырос.

Եղբոր շուրթերիս

խանձված-ածխացած մի **համբույրիկ** է շտապ առաքում:

Նույնիսկ «աստված» բառն է նվազական-արհամարհական ածանցով.

Я думал – ты вселенный божище,

А ты недоучка, крохатный **божик**.

Հակադրությունն էլ ավելի է սրվում գերադրական **-ище** ածանցով դրված «божище» բառի շնորհիվ:

Սևակը թարգմանել է միայն բառի իմաստը՝ բառակապակցության միջոցով, սակայն նորակազմությունը չկա, թեև, ինչպես նկատում է Ա. Սիմոնովան, այս դեպքում միանգամայն հնարավոր էր հայերեն «**աստվածիկ**» նորակազմությունը⁹.

Մի անենազոր մեծ աստված էի ես քեզ համարում,

իսկ դու աստված ես թերուս ու պստիկ:

Մայակովսկին նվազական-արհամարհական ածանցներով բառեր է կազմում անգամ հատուկ անուններից՝ **Круппы и Круппики, Евочки**: Սևակը բառացի պատճենել է՝ նոր բառեր ստեղծելով հայերենի կաղապարներով՝ **Կրուպներն ու Կրուպիկները, Եվայիկներ**:

Բավականին շատ են նորակազմ բայերը՝ հիմնականում կազմված նախածանցներով: Հիշենք, որ ռուսերենում բայական նախածանցները փոխում են ոչ միայն բառի իմաստը, այլև բայի կերպը: Հայերենը, ի տարբերություն ռուսերենի, հարուստ չէ բայակերտ նախածանցներով, ուստի

⁶ Մայակովսկու նորաբանությունների մասին տե՛ս, օրինակ, **Винокур Г.** Маяковский – новатор языка. М., 1943, **Тимофеева В.** Язык и время. Л.-М., 1962, **Гаспаров М. Л.** Очерки истории языка русской поэзии 20-го века. М., 1993:

⁷ Պ. Սևակի թարգմանությունը մեջբերվում է ըստ՝ **Վլ. Մայակովսկի**, Հատընտիր, Եր., 1982 գրքի:

⁸ Տե՛ս **Винокур Г.**, նշվ. աշխ., էջ 370:

⁹ Տե՛ս **Симонова А.** Литературно-критические статьи. Ер., 1965, էջ 183-184:

հաճախ ռուսերեն նախածանցավոր բայի իմաստը թարգմանվում է այլ միջոցներով՝ բառով, բառակապակցությամբ, նկարագրական եղանակով:

Նորակազմ բայերի մի մասը Սևակը փոխարինել է հայերենի բառակազմական կաղապարներով կազմված նորակազմություններով՝ պահպանելով նաև բառերի իմաստը (լիովին կամ մոտավորապես), օրինակ՝

ис- նախածանց+**пешеход**՝ «հետիոտն» (բառացի՝ ոտքով քայլող)+բայական վերջավորություն:

Грудь **испешеходили**...

Սևակը նոր բայ է ստեղծել այլ արմատով՝ **ոտնահետք + բայական -ել** վերջավորություն՝ պահպանելով նորակազմությունը.

Ոտնահետքել են կարծես փողոցի կուրծքը...

вы- նախածանց + **стонать**՝ «հառաչել, տնքալ», կաղապարով Մայակովսկին ստեղծել է **выстонать** նորակազմությունը.

О том, что горю,

В столетия **выстони!**

Թարգմանության մեջ նույն՝ նախածանց + բայ կաղապարով կազմված նորակազմություն է.

Այն մասին, որ այրվում եմ,

Գոնե դարերին **արտահառաչիր:**

Կամ՝

Что каждое слово душу **новорождает**...

(новый, снова + родить՝ **նոր+ ծնել**)

Սևակը նույն կաղապարով բառապատճենել է.

Ուն ամեն բառը **նորածնում** (է) հոգի...

Սակայն Մայակովսկու նորակազմ բայերը թարգմանության մեջ ավելի հաճախ փոխարինված են համագործածական բառերով, որոնք ընդամենն արտահայտում են բառերի ճշգրիտ կամ մոտավոր իմաստը: Օրինակ՝

Досыта **изъиздеваюсь**...

Նորակազմությունը ստեղծված է **из-** նախ.+ **издеваться**՝ «ծաղրել, ծանակել», կաղապարով: Սևակը նկարագրական թարգմանություն է արել.

Կուշտ **կծաղրեմ ու կծանակեմ**...

из- նախածանցով + **язва**՝ «խոց», բառով Մայակովսկին ստեղծում է նաև ուրիշ բայ.

Где золото и грязь **изъязвили** проказу...

Թարգմանությունը դարձյալ նկարագրական է.

Ուր փողն ու փոշին բորախտ են ցրում...

Կամ՝ **о-** նախ.+**гром**՝ «որոտ», կաղապարով է ստեղծված **огромить** նորակազմությունը.

Мир **огромив** мощью голоса...

Թարգմանության մեջ պահպանված է միայն բառի արտահայտած իմաստը.

Համայն աշխարհը **խլացնելով** ձայնովս ահարկու...

Ի պատիվ թարգմանչի նկատենք, որ փոխհատուցելով որոշ նորակազմությունների՝ համագործածական բառերով փոխարինելը՝ Սևակը

ստեղծել է սեփական նորակազմություններ նույնիսկ այն դեպքերում, երբ բնագրում նորակազմություն չկա: Օրինակ՝

Горблюсь в окне...

Լուռ **սապատվում եմ** լուսամուտի մեջ..

Կամ՝

И кто-то,

Запутавшись в облачных путях...

Եվ ինչ-որ մեկը՝

ամպե ճամփեքում մոլորված նորեմ...

Այս նորակազմությամբ Սևակը փոխհատուցում է մի քանի տող վերևում **небье** նորակազմությունը (...и **небье** лицо секунду кривилось)՝ **лисье, медвежье, волчье** հատկացական ածականների նմանությամբ, համագործածական «ամպ» բառով թարգմանելը:

Նշված պոեմի թարգմանության մեջ Սևակի ստեղծած նորակազմություններից են **ամպաթուխայան, երկնաօդային, ոսկեավազ կարմիր, կովարարորեն, կոշկակարային դանակ, անտանջանք համբույր, եռաքառահարկ ծրագու, բերան-հնոց, մշտանդորր կացարան-որջ** ևն (նկատենք, որ հարադրական բարդություններն առհասարակ հատուկ են Սևակի պոեզիային), թեև այս բառերի դիմաց բնագրում նորակազմություններ չեն¹⁰:

Մայակովսկին բավականին հաճախ է նոր բառեր, հատկապես ածականներ կազմում նաև բառաբարդմամբ, ընդ որում՝ այդ բառերն աչքի են ընկնում բաղադրիչների անսովոր համադրությամբ՝ **глазастрогие козлы, мордастоногие дивы, звонконогие гимнасты, небомехий зверь, осеннеликий милень, утроликая девушка, весногубый** ևն:

Նման նորակազմ ածականներ կան նաև քննության առնված պոեմում, օրինակ՝

Потноживотные женщины...

Բառացի թարգմանության դեպքում կլինեն «քրտնափոր կանայք», սակայն Սևակն ընտրել է այլ տարբերակ. կարևորն այն է, որ պահպանվել է բառի և՛ իմաստը, և՛ բառը նորակազմություն է հայերենում.

Եվ կնիկներ՝ փորով **քրտնառատ...**

Կամ՝

Стоглазое зарево...

Տարօրինակ է, որ Սևակը նորակազմությունը չի պահպանել, թեև հայերենում այս կաղապարով նոր բառ ստեղծելը ոչ մի բարդություն չի ներկայացնում: Բացի այդ՝ թարգմանության մեջ անճշտություն կա՝ **стоглазое**՝ «հարյուրաչքանի», դարձել է «հազարգլխանի» (հավանաբար շփոթվել է **стоглазое** բառի հետ).

Հազար գլխանի հրացուլք...

Ինչպես գիտենք, նոր բառեր հաճախ կազմվում են նաև արդեն գոյություն ունեցող որևէ բառի նմանությամբ, համաբանությամբ (օր.՝ **տերևա-**

¹⁰ Պ. Սևակի նորակազմությունները տե՛ս **Արտ. Պապոյան**, Պ. Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարան, Եր., 1986:

թափ բառի նմանությամբ Սևակի ստեղծած *աստղաթափ, գործադուլ, դասադուլի* նմանությամբ՝ *սիրադուլ, բառադուլ* նորակազմությունները):

Այսպես, **кривогубий** (**кривой**՝ «ծուռ» + **губы**՝ «շրթունք») բառի նմանությամբ Մայակովսկին կազմել է **крикогубый** բառը (**крик**՝ «ճիչ»).

Крикогубый Заратуэтра...

Սևակը ճիշտ չի հասկացել բառի իմաստը և թարգմանել է «ծուռբերան»։ Արդի **ծուռբերան** Ջրադաշտն է քարոզում հրես¹¹:

Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ նորակազմ բառն անմիջական կապ ունի մի քանի տող վերևում հիշատակվող **златоустейший** նորակազմության հետ՝ **Иоанн Златоуст**՝ Հովհան Ոսկեբերանի անունից.

Я – златоустейший,

Чье каждое слово

Душу новородит...

Նորակազմությունը ստեղծված է ռուսերենում գոյություն չունեցող կաղապարով. հատուկ անունները չեն կարող գերադրական աստիճան ստանալ, անգամ եթե բաղադրյալ հատուկ անվան մի մասը ածական է, ինչպես նշված օրինակում, առավել ևս, որ սա հարաբերական ածական է և համեմատության աստիճան կազմել չի կարող: Այս կաղապարով բառեր չեն կազմվում նաև հայերենում: Սակայն նկատի ունենալով, որ **крикогубый** և **златоустейший** բառերով Մայակովսկին հակադրություն է կազմում, թերևս կարելի էր նույն կերպ նոր բառեր կազմել նաև հայերենում: Թարգմանության մեջ բնագրի ընդգծված հակադրությունը բավականին թուլացել է, արտահայտչականությունը տուժել է.

Ես՝ ամենամեծ ոսկեբերանս,

ու՛մ ամեն խոսքը նորածնում (է) հոգի...

Խոսենք Սևակի ստեղծած մի նորակազմության մասին ևս՝ «**ցմփորատեսիլ**», որ բնագրում բացակայում է..

Է՛լ ավելի վեր խոյացեք օդում

Լապտերասյուներ, ալրավաճառների **ցմփորատեսիլ**:

Այստեղ թարգմանիչը ճիշտ չի մեկնաբանել բնագրի տողերը.

Выше вздымайте, фонарные столбы,

Окровавленные туши лабазников.

Եթե բառացի թարգմանենք, կլինի՝ «**է՛լ ավելի վեր բարձրացրեք, լապտերասյուներ՝, ալրավաճառների արյունաշաղախ մարմինները**»: Նկատենք նաև, որ *туша* բառը գործածվում է կենդանիների, բայց ոչ մարդկանց վերաբերյալ:

Մայակովսկին ունի նաև նորակազմություններ, որոնք շեղվում են ռուսերենի օրինաչափություններից, կանոններից՝ ոչ ստանդարտ հոլովում, խոնարհում, հոգնակիի կազմություն ևն. Գ. Վինոկուրը նշում է այդպիսի 13 դեպք¹²:

Օրինակ՝ **любовь** գոյականը ռուսերենում անհոգնական է, սակայն Մայակովսկին այն գործածում է հոգնակի թվով.

¹¹ Այս մասին խոսում է նաև Ա. Սիմոնովան «Поэма В. Маяковского «Облако в штанах» в переводе П. Севака» հոդվածում (տե՛ս **А. Симонова.**, նշվ. աշխ., էջ 183):

¹² Տե՛ս **Винокур Г.**, նշվ. աշխ., էջ 368:

Из **любвей** и соловьев какое-то варево...

Եվ՝

Сквозь жизнь тащу

Миллионы огромных и чистых **любовей**.

Այս կարգի նորակազմությունների թարգմանությունն ամենաբարդն է, հաճախ անհնարին: Բայց հիշենք, օրինակ, Սևակի սեփական նորակազմությունը. կանոնավոր **սիրո** ձևի փոխարեն նա գործածում է անհնչյունափոխ **սերի** ձևը: Թարգմանությունների մեջ կանոնավոր **սերեր** ձևն է:

Նույն կերպ ռուսերենում հոգնակիի ձև չունի **мясо** գոյականը, բայց Մայակովսկին այն ևս գործածում է հոգնակիով.

Земля заляжет женщиной

заерзает **мясами**...

Հայերենում **միս** բառը հոգնակի թիվ ունի, և Մայակովսկու նորակազմության փոխարեն թարգմանության մեջ համագործածական բառ է՝ **մսեր**:

Այսպես նաև կանոնավոր **в раю** ձևի փոխարեն՝ **в рае**:

Կամ՝ ընդունված **крылатый** ձևի փոխարեն Մայակովսկին 2 անգամ գործածում է **крыластый** ձևը.

Этот, за тобой, **крыластый**,

Знает, что такое любовь?

Եվ՝

Крыластые прохвосты!

Այս կարգի նորակազմությունների թարգմանությունը, ինչպես արդեն նշեցինք, չափազանց բարդ խնդիր է, սակայն միշտ հնարավոր է լեզվում բառակազմական այս կամ այն միջոցի բացակայությունը, պակասը լրացնել այլ միջոցներով: Օրինակ՝ հայերենը չունի *հատուկ անուն+վ կրավ. ածանց+բայական. վերջավ.* կաղապար, սակայն Շիրազն այս կաղապարով կազմում է **Արարատվել, Մասիսվել, Սիփանվել** ևն բառերը, գոյություն չունեցող *հատուկ անուն+բայական. վերջավ.* կաղապարով Չարենցն ունի դիպվածային **ազատ-վշտունել** նորակազմությունը՝ «Անատան բառերի շարքով / Թող Ազատն **ազատ-վշտունել**»: Կամ՝ հայերենում չեզոք սեռի բայերը չեն կարող կրավորական ածանց ստանալ, բայց Չարենցը կազմել է **երազվել** նորակազմությունը՝ «**թող երթս երազվի քեզ**»: Հայերենում գոյություն չունեցող կաղապարներով են ստեղծված նույն Սևակի **քոպեսներ, իմպեսներ, քեզապաշտ, քոյասիրահար** ևն բառերը:

Հեղինակային-անհատական նորակազմությունները շատ են նաև **Սերգեյ Եսենինի** պոեզիայում¹³: Սակայն հայերեն թարգմանությունների մեջ նորակազմություններ, հազվադեպ բացառությունները չհաշված, պարզապես չկան¹⁴:

Եսենինի նորակազմությունների մեջ առաջին հերթին նշենք հատյալ վերջածանցով գոյականները՝ կազմված ածականներից, բայերից, գոյա-

¹³ Եսենինի նորակազմությունների մասին տես **Е. Галкина-Федорук**. О стиле поэзии Есенина. М., 1965, **Тимофеева В.**, նշվ. աշխ., **Лопатин В.**, նշվ. աշխ., **Кожевникова Н.** Словоупотребление в русской поэзии начала 20-го века. М., 1986:

¹⁴ Ս. Եսենինի բանաստեղծությունների հայերեն թարգմանությունները մեջբերվում են ըստ՝ **Ս. Եսենին**, Բանաստեղծություններ, պոեմներ, Եր., 1982 և **Ա. Բլոկ, Ս. Եսենին**, Բանաստեղծություններ, պոեմներ, Եր., 1986 գրքերի:

կաններից՝ **зыбь, цветъ, звень, темь, водь, новь, стынъ** ևն (ի դեպ, նման նորակազմություններ ունի նաև Մայակովսկին): Այսպիսի գոյականները հիմնականում ցույց են տալիս վերացարկված հատկանիշ կամ վերացարկված գործողություն, կամ էլ ունեն հավաքական նշանակություն:

Հայերենը չունի բառակազմական այսպիսի եղանակ, սակայն թարգմանիչները չեն օգտագործել հայերենի բառակազմական լայն հնարավորությունները՝ փոխհատուցելու համար պակասը: Թարգմանությունների մեջ հատյալ վերջածանցով բոլոր գոյականները փոխարինված են համագործածական ածականներով, գոյականներով կամ գոյականաբար գործածված ածականներով (փոխանունությունը հայերենում սովորական երևույթ է): Բերենը ընդամենը մեկ-երկու օրինակ.

В эту **синь** даже умереть не жаль...
Այս **կապույտում** փույթ չէ և կախվել: (Գ. Էմին)

Կամ՝

Где ты, радость? **Темь и жуть**...
Ո՞ւր ես արդյոք, խնդություն...
Թախիծ է, մութ անսահման... (Վ. Դավթյան)

Եսեմինն ունի նաև հետաքրքիր, անսպասելի զուգակցումներով նորակազմ ածականներ, մակբայներ:

Նորակազմություն է **копытливый** ածականը՝ **копыто**՝ «սմբակ» գոյականից (ռուսերենում **-лив** ածանցը¹⁵ ցույց է տալիս 1. որևէ գործողության հակում ունենալ, 2. մի բանի հակում ունենալ մեծ չափով, ևն).

Деревянные всадники
Сеют **копытливый** стук.

Թարգմանության մեջ նորակազմությունն արտացոլված չէ, իսկ Сеют копытливый стук փոխաբերություն-պատկերը փոխարինված է պարզապես «դոփում են»-ով, որից պատկերի արտահայտչականությունը տուժել է.

Եվ դոփում են փայտե
Հեծվորները այգում:(Գ. Էմին)

Նույն ածանցով է կազմված **кивливый** ածականը՝ **кивать**՝ «զլխով աճել», բայից.

Говорят со мной коровы
На **кивливом** языке.

Պ. Սևակը նորակազմությունը փոխարինել է ուրիշ արմատներով կազմված նորակազմությամբ՝ **շարժումնալի**.

Եվ **շարժումնալի** իրենց բարբառով
Կովերն են անվերջ ինձ հետ բարբառում:

Նոր բառեր կազմելիս Եսեմինը բավականին հաճախ շեղվում է ռուսերենի բառակազմական օրինաչափություններից:

Օրինակ՝ **-ист** ածանցով ռուսերենում ածականներ կազմվում են անորոշ դերբայի հիմքից (**играть-игристый**): Սրա նման **рыдать**՝ «հեկեկալ,

¹⁵ Տե՛ս «Грамматика современного русского литературного языка». М., 1970, էջ 145: Այստեղ և հետագայում ռուսերեն ածանցների նշանակությունները բերվում են ըստ նշված գրքի:

հեծկլտալ», բառից պետք է կազմվեր **рыдистый** ածականը, սակայն Եսենինը ստեղծել է **рыдалистый** նորակազմությունը.

И наполняет тишь полей

Такой **рыдалистою** дрожью...

Թարգմանության մեջ նորակազմությունը բաց է թողնված.

Եվ հառաչում է այնպիսի դողով... (Գ. Էմին)

Եսենինը **душистый** կանոնավոր ձևի փոխարեն գործածում է **духови-тый** խոսակցական ձևը. -**овит** ածանցով ածականներ են կազմվում միայն գոյականական հիմքերից և նշանակում են մի բան ունեցող (անարտադրողական ածանց է): Նույն կաղապարով Եսենինը ստեղծել է **пуховитый** նորակազմությունը՝ **пушистый**-ի փոխարեն:

Կամ՝ **лошадь** գոյականից կազմվում է կանոնավոր **лошадиный** ածականը, իսկ Եսենինը ածական է կազմում **лошажий** ձևով (ինչպես **медведь-медвежий**, **верблюд-верблюжий** հատկացական ածականները).

Взял я кнут и ну стегать по **лошажьим** спинам.

Թարգմանության մեջ նորակազմությունը չկա, և բացթողումը փոխհատուցված չէ.

Մտրակն առած՝ ձիերին են դաղում մեկ-մեկ: (Վ. Դավթյան)

Зеленокосая նորակազմությունը՝ «**Зеленокосая ...стоит берега**», թարգմանության մեջ փոխարինված է ազատ բառակապակցությամբ, թեև հայերենում հնարավոր էր նույն կաղապարով ստեղծել նորակազմություն՝ կանաչավարս, կանաչածամ, կանաչահյուս ևն.

Կանաչ վարսերը թափած ուսերին: (Յ. Սահյան)

Եսենինն ունի նաև բազմաթիվ նորակազմ բայեր՝ հիմնականում կազմված նախածանցներով: Ինչպես արդեն շեշտել ենք, հայերենը միշտ չէ, որ հնարավորություն ունի ռուսերենի նախածանցավոր բայերի իմաստները արտացոլելու համարժեք նախածանցներով, հաճախ հարկ է լինում դիմելու այլ միջոցների: Թարգմանությունների մեջ պահպանված են միայն նորակազմ բայերի իմաստները, սակայն բառակազմական այդ միջոցի պակասը ոչ մի կերպ չի փոխհատուցված:

Միայն **любить**՝ «սիրել», բայով Եսենինը մի քանի նորակազմություն ունի: Թարգմանիչները նկարագրական թարգմանություն են արել. պահպանել են միայն նորակազմ բայերի արտահայտած իմաստները: Օրինակ՝

Ведь **отлюбили** мы давно....

Բառը ստեղծվել է **от-** նախածանց (որ ցույց է տալիս գործողության ավարտ, ավարտվածություն, սպառվածություն) + **любить** կաղապարով: Թարգմանությունը նկարագրական է.

Դադարել ենք սիրել մենք վաղուց... (Վ. Դավթյան)

Любить բառով Եսենինը նոր բառ է կազմում նաև **вы-** նախածանցով (որ նույնպես ցույց է տալիս գործողության ավարտ, ավարտվածություն).

Если душу **вылюбить** до дна...

Թարգմանիչը ոչ միայն բաց է թողել նորակազմությունը, այլև միանգամայն փոխակերպել է բնագիրը.

Թե վառի քո հոգին սիրո թեժ կրակը... (Յ. Սահյան)

Նորակազմությունն է **излюбить** բայը՝ կազմված **из-** նախածանցով (դարձյալ գործողության ավարտ, սպառվածությունն իմաստով)։

Излюбили тебя, измызгали

Невтерпеж...

Ինչպես մյուս օրինակներում՝ այս դեպքում ևս նորակազմությունը թարգմանության մեջ չկա։

Տրորել են, մաշող սիրով

Քրքրել են քեզ ... (Հրաշյա Թամրազյան)

Կամ՝ **копыто** գոյականից եսենիմը կազմել է **копытить** նորակազմությունը։

Хорошо **копытит** конь.

Սևակը թարգմանել է բառի մոտավոր իմաստը, սակայն նորակազմությունը չկա, թեև հնարավոր էր հայերենում կազմել **սմբակել** բառը (հիշենք Հր. Մաթևոսյանի **ուսել, արմնկել, ոտքել** ևն նորակազմությունները)։

Դոփդոփում է ձին վռագ ու վռագ:

Իր ստեղծած **копытить** նորաբանությունից եսենիմը ուրիշ բայ է կազմում՝ **на-** նախածանցով (ցույց է տալիս 1. գործողության լրիվություն, չափազանցություն, ավելացում, 2. գործողության լրիվ ավարտ ևն)՝ **накопытить**։

Напылили кругом. **Накопытили**.

Թերևս ավելորդ է նշել, որ թարգմանության մեջ նորակազմությունը պարզապես դուրս է մնացել։

Նա (կառքը) փոշի հանեց...

Եսենիմի բանաստեղծությունների հայերեն թարգմանություններում նորակազմության հատուկենտ օրինակներից է Սևակի ստեղծած «**լուսնակություն**» գոյականը՝ եսենիմի **лунность** նորակազմության փոխարեն՝

«Неуютная, жидкая **лунность**»։

Անհրապույր ու ջրալի **լուսնակություն**...

Այսպիսով, հատուկենտ բացառությունները չհաշված՝ թարգմանիչները խուսափել են եսենիմի բազմաթիվ նորակազմությունները թարգմանելուց, թեև, ինչպես գիտենք, հայերենի բառակազմական կաղապարները շատ ճկուն են, որը լայն հնարավորություններ է ստեղծում թարգմանիչների համար։

Ինչպես արդեն ասել ենք՝ կարևորն այն չէ, որ բնագրի յուրաքանչյուր նորակազմությանը թարգմանության մեջ համապատասխանի նորակազմություն, առավել ևս, որ շատ հաճախ դա պարզապես անհնարին է. տարբեր լեզուներում տարբեր են բառակազմական կաղապարները, կանոններն ու օրինաչափությունները։ Սակայն նորակազմությունները յուրաքանչյուր հեղինակի լեզվաոճական կարևոր առանձնահատկություններից են, որոնք չի կարելի հաշվի չառնել։ Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, հեղինակային-անհատական նորակազմությունների թարգմանությունը բարդ խնդիր է, բայց ոչ անլուծելի։ Եթե լեզուն չունի բառակազմական այս կամ այն միջոցը, ապա կարելի է և հնարավոր է պակասը լրացնել՝ օգտագործելով լեզվում եղած այլ միջոցներ, ինչպես Սևակն է

Մայակովսկու պոեմը թարգմանելիս նոր բառեր ստեղծել՝ օգտագործելով հայերենի բառակազմական լայն հնարավորությունները:

АРЕВИК КАМАЛЯН – *О переводе авторских неологизмов.* – В статье рассматриваются сложности, возникающие при переводе авторских (индивидуальных) неологизмов. Словообразовательные модели, способы, типы и правила, присущие разным языкам, часто не совпадают, и это создаёт определённые трудности для перевода. Так называемые общезыковые неологизмы переводятся несколькими способами, в их числе транскрипция или транслитерация, калькирование, описательный и приближительный перевод и т. д., однако чаще всего эти способы неприменимы при переводе авторских неологизмов.

AREVIK KAMALYAN – *On the Problem of Translating Author's Neologisms.* – The article discusses the difficulties that arise when translating author's (individual) neologisms. Most word-formation models, methods, types and rules do not coincide in different languages, and this makes some difficulties in translation. The so-called general linguistic neologisms are translated in several ways: transcription or transliteration, tracing, descriptive translation, an approximate translation, etc., but often these methods can not be applied when transferring the author's neologisms.